



ՏՆՕՐԷՆ-ԻՄԲԱԳԻՐ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 32

ՀԱՐԱՐ

5 ԱՊՐԻԼ 1908

ԱՊՐԱՑՄԵՆՈՒՄ ԵՄԻՏՏԱՆԻՄ

ՀԱՆՐԱՅԻՆ

ԱՊՐԱՑՄԵՆՈՒՄ ԵՄԻՏՏԱՆԻՄ

ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻԶ

Գ. ՄԱՐԳԻՍՈՅ ԵՒ ԸՆԿ.

Պալատ-Փարոս, Օռոգտի-Պալատ հաստատութեան գէմ, Թիւ 16

Հատոր 40 փարս

(آ. آسادریان) شرکت صنییه مطبعیه — باب عالی جاده صندیه نو سو ۵۲

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍՏՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապր-Ալի մասեքսի քիւ 52



Չէնքի, ոսկի ու օսկի եւ ձեռքի
փանգամայն մեքենաներ
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տագնապի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ռ

ՀԱՅԹԱՅԹԻՆ ԿԱՅԾ. ՓԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարելագործւածը, հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գտնէ:

Սինկերի մեքենաները կը ծախսին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՉԱՐԵԻՆԵԼԻ
ՄԱՍՆԱԾԻՆԵՐ

- | | |
|----------------|--|
| ԲԵՐԱ | (1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց, Կարաթա Մէրայի Լիսէին դէմ. |
| ԿԱԼԱԹԱ | (1. Սինկեր Դան, Թիւնէլի ետեւը. |
| | (2. Գարաբէօյ, Թրամվէյի կայարանին դէմ. |
| ՊԱԼԻՍ | (1. Սուրբ Կիւրճեան համալսարան . |
| | (2. Սուրբ Կէրակի, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 . |
| ՍԵԻՆՏԱՐ | Չարլը Պօլս, թիւ 120 . |

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնաձեռն գաւառներու բոլոր ֆաբրիկաներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 և 343 կրկին, Տիւրքոյաի տունը:



ԱՐՏԵՆԻԿ ՕՐԱՆ

ԹԵՐԹ ազգային, գրական եւ ֆաբրիկային: — Բաժանորդագրութիւն՝ տարեկան 4. Պոլսոյ համար 80 դր. վեցամսեայ 45 դր. դաւաններու համար տարեկան 108 դր. վեցամսեայ 60 դր. և օտար երկիրներու համար տարեկան 35 ֆր. վեցամսեայ 20 ֆր. Ձեռքէ վաճառում՝ 50 ֆր. փառա: **ԱՐՏԵՆԻԿ** հրա լարակ կ'եղէ ամէն օր, կէս օրին, խընաւեալ բովանդակութեամբ, ընտիր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով:

ԱՐՏԵՆԻԿ, իր վերակազմուած խումբագրութեամբ և իր կարող աշխատակիցներ

բով, առաջնակարգ տեղ մը կը գրաւէ տեղական հայ մամուլին մէջ:

Իր առաւելութիւններէն մէկն է ՊԱՏԿԵՐԱԶԱՐԻ ըլլալու հանգամանքը, որով իր ընթերցողներուն կը ներկայացնէ պարբերաբար: Ծանօթ Դէմքեր և երբեմն ալ տեսարաններ: Ոչ նուազ կը գնահատուին իր մատակարար յօդուածները, եկեղեցական կրօնական, տնտեսական-սեղանաւորական, երկրագործական, իրաւաբանական եւայլն, բացի գրական, բանասիրական գրուածքներէ, օրուան տեսութիւններէ եւայլն:

ԱՐՏԵՆԻԿի վերաբերեալ ամէն գրութիւն ու բաժանորդագրին շնորհ է ուղղել Տէր և Տնօրէն Գարեգին էֆ. Պօլսեանի հասցէին, Ղալաթիա, Մահմուտիէ Ճաւաթէի, ուր հաստատուած են թերթին ապարանն ու խումբագրատունը:



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ — ՎԱՀԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 32

ՇԱՐԱԹ-

5 ԱՊՐԷԼ 1908

ԹԷ ԻՆՉ ԿԼՍԷ ԳՈՐԾԻՆ ՏԵՐԸ

ՍՄԱՍՏ ԴԱԽԹԵԱՆ բարեկամիս՝
յարգանով .

Բուն նիւթին անցնելէ առաջ՝ ազնիւ բարեկամս, թոյլ տուք ինձ յայտնել անկեղծ շնորհակալիքս *sur commande* Ձեր այն յօդուածին համար՝ որ մեր գաւեցաբերքին նուիրած էիք, *merci* :

Ձեր անհասական կարծիքը զոր խոսացնել ուզած էիք, գրականութեան մաս կադմոդ երգիծականին և գաւեչտականին մասին, իր ընդհանուր փուլերուն մէջ ուղիղ և ընդունելի իսկ ըլլայ, մասնագէտին համար քիչ մը աւելի *partie prise* կը մօտենայ քան թէ քացարձակ ճշմարտութեան :

Երգիծանքը, որ հելլէն գրականութեան շիղը և անոր ընդոծին մայր-աղբիւրը կրնայ համարուիլ, մեր մէջ սշակուած է միմիայն լուսահոգի անմոռանալին՝ Յ. Յ. Պարոնեանի կողմէ և որ, ինչպէս կը սիրէ ըսել ուսմիկը, «հետը տարած է», զի ինչպէս դուք իսկ կը խոստովանիք, այսօր բուն երգիծանք չունի

մեր գրականութիւնը և ոչ ալ հետեւողներ այդ բնառուած, հաւնուած ճիւղին :

Մինչև հոս, կարծեմ թէ ձեր իսկ մտածումով, ձեր իսկ բերնէն խօսեցայ, բայց ներեցէք որ բաժնուինք սիրելիս, ու մենք ալ մեր չափ քիչ փորձառութեամբը գործին, պարզենք նիւթը մեր կարողութեան չափով :

Դուք՝ Ձեր բազմամեայ աշխատասիրութեամբը և հետազոտութեամբը գործին, կարելի է որոշ ընարութիւններ ընէք, և արժանիքներու բարձր ու տկար նօթեր տաք զերասաններու մասին, քննելով քննադատելով անոնց կարողութեան չափը և աստիճանը, բայց, երգիծանքին և գաւեչտին կընճռոտ պրպտութեամբ, ներեցէք ըսել թէ *compétence* ինչդիր է :

Յ. Ալփիարին՝ Պարոնեանի աթոռը տալ կուզէք, երգիծաբանի *fauteuil*՝ ուր անհանգիստ պիտի ըլլայ խեղճը, քանի որ անկալ

այդ տիտղոսը չունի պետք է ըսել: Յ. Ալ-
փիար Ֆանթեզիսը մըն է, ֆրանսերէն մտա-
ծող և ... հայերէն գրող, ապացոյց՝ իր
յօդուածները, ալ աւելի կոչումին ժողովնե-
լու համար մէջ բերած expressionները, ու-
րոնց հայերէնները երբ դնել ուզէր, չատ բան
պիտի կորսընցնէր անունի համբաւէն: Ուստի
համոզուեցէք աշխու բարեկամս թէ՛ Յ. Ալ-
փիար իր յատուկ դպրոցին պետն է, դպրոց
մը՝ որուն առանց աշակերտելու պետը եղած
է ու պիտի մնայ ալ:

Իսկ երուանդ թօլայեան, այն չուտիկ
քրոնիկագիրն է, որը օրին նիւթերով զբա-
ղող մեր չփացած enfant gâté, որ ինքն ալ
իր կարգին զատ ոճ մը ունի, զուարթ գրակա-
նութեան չուրջ բզզուն թիթեռնիկ մը որ իր
ետեւէն կը քաշէ ամէն անոնք՝ որոնք իր
գոյնիւրէն կը չլսնան: Խանդավառ ինչ մը կ'այ
իր գրուածքներուն մէջ, որ թէ երգիծական
է, և թէ սրամիտ, վերջապէս մէկ բազով,
այսօր չատեր կան՝ որոնք աւելի համ կ'առ-
նեն թօլայեանի յօդուածէն ... քան թէ
Մըմբեանի բարձր փիլիսոփայութենէն:

Իսկ գալով վաճառ Փափագեանին, իր
շաբարական գրուածքներուն մէջ... եւլն. եւլն.
կըսէք ինձ համար, առանց որոշ ճիւղի մը
մշակը անուանելու ա'ն՝ որ տասը տարիէ
ի վեր զաւելտականով կը զբաղի:

Չաւելտը որ ինքնին գրականութեան մէկ
ճիւղը, մէկ մասը կը կազմէ, հինէն ի վեր գո-
յութիւն ունի և պիտի ունենայ ալ, ցորչափ
սոնմայիմ բնական ըսուածը դոյութիւն ու-
նենայ: Այսօր գրական այս ճիւղէն համահա-
ւասար կախորժին պօստամալը տուտուններէն
մինչև դժուարահաճ իմաստասէրները, և
գիտէք ինչո՞ւ, որովհետեւ զաւելտականին
լեզուն է'ն բնականն է, առանց թուայթի՝
négligé, original, որով բարձրը կը ցոլա-
նան, տանիքներու տակ անցածն ու դար-
ձածը դուրս կուգայ, և չկայ դասակարգ մը՝
որ չ'ախորժի միջակորեար ընտանիքի այդ
խօսուն պատկերներէն, ինչպէս կուզէք զա-
տել ձեր գրութեան մէջ: Պէտք է համոզուիք
Սմբատ էֆէնտի թէ, զաւելտին մէջ մաքուր
լեզու և բարձր ոճ չի կրնար գործածուիլ,
բնականէն չեղում մը պիտի ըլլար ատոր
փորձն իսկ, քանի որ մենք՝ դուք, մեր տու-

ներուն մէջ առօրեայ ընտանեկան խօսակցու-
թեանց պահուն՝

— Էյ ճանճմ, ինչո՞ւ համար աս սալա-
թային չատ եաղ էք դրէր ... կըսեք, և
ոչ թէ՛

— Բարէ ... է'ր բազում էք արարում
զիւզն սալաթայիս այս ...:

Ինչպէս կը տեսնէք, ինչ որ ընտանեկան
է, բնական է, և ինչ որ բնական է կրնայ
զաւելտի մէջ գործածուիլ, պատկերները
բուն իրենց գոյներուն, փուլերուն մէջ ցոյց
տալու համար:

Արդ, եթէ այսօր Լիւան կարդացողները
Արիիարէն չատ են թիւով, պատճառը սա
պարզ ճշմարտութիւնն է որ բացայայտ և
բացորոշ զաւելտականէն և բնական լեզուէն
հասկացողներու և ախորժողներու թիւը ա-
ւելի չատ է, անոնցմէ որոնք ֆրանսական
առկօ բանաձեւերէն համ կ'առնեն:

Գալով թերթիս լեզուին և խնամքին,
պէտք է ըսել թէ օրաթերթ մը կամ շաբա-
թաթերթ մը, զիրք մը կամ բառարան մը
չէ սիրելիս. այս վերջինները մինչև որ կաղ-
մարարին յանձնուին չորս հինգ անգամ աչքէ
և աչքերէ կ'անցնին, ինչպէս դուք ալ իբրեւ
հեղինակ՝ կրնաք վկայիլ և ընդունիլ, մինչ-
դեռ թերթերը ափ յափոյ հրատարակուելուն
համար այդ կրկնակ խնամքներէն զուրկ են
և կըլլան ալ: Իսկ լեզուին համար մասնա-
ւորաբար կրնանք ըսել թէ, զաւելտը իր
ուրոյն ոճը ունի և զայն բնականէն չի չե-
ղեցնելու համար՝ ստիպուած ենք ըսուածքին
ձայները պանկ սխալ ուղղագրութեամբ
ատիկայ մեր գիտակցութեամբն է և ոչ թե-
րութիւն:

Այսպէս ուրեմն Աղնիւ բարեկամս, երբէք
մի փորձուիք լուծել մէկ ջուրի մէջ, ապսե-
քը, գինին և օլին, թէեւ երեքն ալ զուար-
թութիւն կուտան բայց տարբեր ֆունկիւններ
ըլլալուն չեն կրնար ի մի ցուլուիլ:

Միշտ ջանացէք կարդալ իրենք իրենց
մէջ, Ալփիարը, Թօլան և Լիւան, և պիտի
տեսնէք թէ՛ երեքն ալ տարբեր տարբեր
զուարթութիւն մը պիտի տան:

Կը սխալիմ արդեօք ...:

Վ. ՓԱՓԱՋԵԱՆ

ԱՄՈՒՆԷ

Վանդակ մը առանց թռչունի և տուն մը առանց զաւակի, ինչպէս կը բացագանչէր Հիւսօ:

Եւ բարեկամս կարգուած օրէն — տաննէրկու տարիներ անցած էին այդ թուականէն ի վեր — կ'ապասէր զաւակի մը՝ որ չէր ուզեր գալ: Բժիշկները, բոլոր սուրբերը, ուխտերը և դեղերը ապարդիւն մնացած էին տալու այդ մանկապաշտի ամուլին միակ երջանկութիւնը՝ որու կը բաղձային: Տասներկու տարի, ալ յուսահատելու ժամանակը եկած էր: Հինգ տարի շարունակ մաշեցնող սիրով մը տառապելէ ետքը, վերջապէս ամուսնացած էին և Աստուած վրկած էր այդ զոյգը իր ամենէն մեծ շնորհէն:

Տիկինը վարդի պէս թարմ, քաջառողջ, երիտասարդ, ամուսինը հազիւ երեսունը հինգ տարու առոյգ ու կորովի և սակայն . . . :

Այդ հատցնող սպասումին մէջ, սպաննելու համար վնասութիւնը որ ուսերուն վրայ կը ծանրանար, Տիկինը՝ երեւակայութեանը մէջ ստեղծած էր ձերմակ տանթէններով զարդարուն օրօրոց մը որու թափանցիկ վարագոյրներու ետեւէն աղւոր, վարդագոյն այտերով պէպէ մը շարունակ կը ժպտէր իրեն և գիրք թեւերովը փաթթութիւն կուզէր վզին:

Ականջին՝ ներգաշնակ կերպով կը հնչէր ամենէն անուշը բառերուն, «մամա» . . . : Երազ՝ որ չէր ուզեր իրականանալ: Եթէ այդպէս պիտի ըլլար, ինչո՞ւ ամուսնանային: Նախահոգ տալով կը նայէր հիմայ այն ամէն մայրիկներուն որոնք հրեշտակներ ունէին իրենց ստինքներէն կախուած: Օ՛հ, անոնց սէրը, գուրգուրանքը, բերնին ջրերը վազցնել կուտար և մոլեգին կատաղութեամբ մը յափշտակել կուզէր անոնց գիրկերէն այդ մատղաշ, սիրուն արարածները ինքզինքին զաւակ մը տալու համար:

Իրենց անհուն սէրը, մէկգմէկու համար ունեցած ամենօրեայ գորովին, փոխադարձ խանդաղատանքին, անպտուղ, ամուլ մնացած էր աւագուտ հողի վրայ տնկուած ծառի մը նման: Եւ դժգոհանքը կամաց կամաց կ'ընկերներ զետեղած էր իրենց պայծառ ճա-

կատին վրայ: Կեանքը երկայն կերեւէր իրենց և անօգուտ:

Ինչ աղւոր պիտի ըլլար պտուտիկ չապիկներ կարել, տեսակ տեսակ կրծկալներ ձեւել, ամենուն վրայ ալ տանթէլ: Ժապաւէն, պըռօտէ . . . :

— Մամա՛ . . . :

— Հոգի՛ս . . . :

Ժանեկազարդ շուսամփոփներու տակ պըռպըրացող կանթեղներու լոյսին քովիկը իրենց երազը կ'երկարէր: Պարոնը իր թերթերու ընթերցումին մէջ կը մոռնար հիմա ամուսնական այդ դժբաղդութիւնը և Տիկինը իր ձեռագործին մէջ կը թաղէր իր սրտին իղձը և արգանդին մարմաջը: Եւ օրերը կանցնէին:

Մանուշակի փոքրիկ փունջ մը, կարասիի մը վրայ մոռցուած այդ գոց սենեակին գաղջութեան վրայ կաւելցնէ իր տարտամ բոյրին աղբեցութիւնը այն հրապոյրով որ յատուկ է այն ամեն բաներուն որոնք չեն տեսնուիր բայց աղւոր կը հոտին: Զգլխի այդ մթնոլորտին մէջ, երկուքն ալ զատ զատ մի և նոյն մտածմունքով կը չարչրկուին: «Ա՛խ զաւակ մը» . . . : Հիմա իրենց ամուլ կեանքին դատարկութիւնը լեցնելու համար իրենց սէրը կը ցրուեն տարաշխարհիկ բոյսերու վրայ և անոնց խնամքովը կ'զբաղին ինչպէս նաեւ կը բուծանեն քանարիաներ և թռչնիկներ որ ոսկեթել վանդակներու մէջ կը ճվճվան:

Տխուր և սովորական պատմութիւնը անզաւակ ամուսիններու:

Անապատի պէս դատարկ կերեւայ այդ տունը ուր երկու գլուխները իրարու չեն հանդպիր որքանի մը եղբերքին վրայ:

— Ա՛խ, աղւոր մանչուկ մը . . . :

— Գոնէ աղջիկ մը . . . :

Սրտերնուն խորէն դուրս եկած այդ հառաչները սակայն, կը կորսուին, կ'անէանան կեանքի այս միօրինակութեան մէջ:

Սկիզբը՝ ինչ յոյսերով լեցուն էր և ինչ ակնկալութիւններով պարարտ:

— Զարեհ պիտի դնենք անունը:

— Արամը աւելի աղւոր է:

— Եթէ աղջիկ ըլլայ՝ Լիւսի:

— Չէ, Մարի, Աստուածածնին անունը:

Տասներկու տարիներ անցած էին այդ յոյսով, այդ փափաքով:

Եւ այսպէս կապրէին կծկուած իրենց գորովին մէջ և կրծելով իրենց սէրը համբոյր առ համբոյր:

Զատիկ առտուն, եկեղեցիներուն զանգակները իրենց խռպոտ զօղանջով կը լեցնեն քաղաքը ամբողջ:

Տիկիներ իր հայելիին առջեւ՝ կը ծեքծեքի կարգադրելու համար լանջածոպը շապիկին:

Պարոնը դգրոցի մը մէջ մոռցուած թըղթերու դէպ մը կը խառնշտկէ: Յանկարծ, դեղնած պրիսթօլ մը ձեռքին կը հանդիպի:

— Էլի՛դ, տե՛ս ի՛նչ ձեռքս անցաւ:

Կը մօտենայ ամուսնոյն և կը նայի:

Վիմազիր քանի մը տողեր:

«Պատիւ ունիմ ծանուցանելու ամուսնութիւնը...»:

Իրենց ամուսնութեան ծանուցադիրը, տասներկու տարի առաջ:

Կը ժպտին իրարու և տեսակ մը ակնարկ կը փոխանակեն:

Յուզմունք մը իրենց սիրտը տրոփել կուտայ և այդ վայրկեանին կանդորդառնան իրենց անցեալին վրայ: Այն ատեն Էլի՛դ՝ կոյս շուշանաթոյր և ինքը սիրավառ երիտասարդ, երդումի մը մէջ կամրապնդէին սիրացումը իրենց դեռաբողբոջ սէրերուն:

Այդ ողորկ թղթի կտորը որ այն ատեն փալիւռն և պանծալի իրենց ամուսնութեան զանգակները հնչեցուցած էր, հիմակ դէպ-դեղին, նորէն կը վերարծէ իրենց երբեմնի սիրոյն ամբողջ զօրութիւնը:

Միասին կարդացին զայն և այդ սրտայոյզ ընթերցումը աւարտելուն, Էլի՛դ սթափելով նշմարեց թէ անզգալաբար իր թեւերը անցուցած էր իր ամուսնոյն վզին և անիկայ իր հրատապ շրթունքները կը մօտեցնէր իրեն-ներուն:

Եւ դուրսը գառնուկները կը մայէին:

Յ. ԱԼՓԻԱՐ



ԲԱՑ ՆԱՄԱԿ

ԵՆՈՎԷ ԱՐՄԵՆԻՑ

«Մասիս»ի 17րդ թիւին Բրոնիկի բաժինին մէջ անունիս շուրջ քինախնդիր ոճով մը անուանարկիչ շեշտերդ կարդացի, անխորհուրդ տողերովդ՝ կրօնական ասպարէզին լիովին անյարմար մէկը հռչակելու կելլես զիս, կը զարմանամ, որ ի՛նչ համարձակութիւնով պատգամներ կ'որոտաս և վճիռներ կ'արձակես ձեռնհասութեանէդ վեր եղող խընդիւրի մը մասին:

Երկրորդական և երրորդական դիմումիս շարժառիթը ուրիշ բան չ'էր՝ եթէ ոչ Գեր. Տ. Նղիչէ Ս. Դուրեանէն ստացած մէկ նամակս՝ որ զիս կը խրախուսէր կրկին դիմելու Ն. Ամենապատուութեան յուսադրելով թէ կրնայի ընդունուիլ Դպրեվանքի մէջ:

Մօտաւորապէս ես դիմում ըրած չ'եմ, մէկ խօսքով չ'եմ կրնար յուշաբերել երբ նամակ գրած ըլլալս թախանձագին . . . :

(Բու խօսքովդ): «Մասիս»ի մէջ պէտք է որ այդ յիշուած նամակին՝ թիւը և բովանդակութիւնը նոյնութեամբ հրատարակէք, որովհետեւ կ'ուզեմ հասկնալ սա անլուծելի կորուստն հանգոյցը՝ որ քեզի շատ հետաքրքրէր է վեր ի վերոյ անճշմարտանման իրողութիւններ հրապարակաւ գրելու, անձա խճճելու, վերջապէս արժանապատուութեանս հետ խաղալու, ոտնակոխ ընելով վեց տարիէ ի վեր գրական հրապարակի վրայ համեստօրէն շահած պատիւս:

Եւ աւելի չիտակը ո՛րքէն ստուգեցիր իմ անընդունակութիւնս և կղերական կոչումի մէկ անկարող վիճակս: Արգահատանքով խառն կարեկցութիւնով մը կը խնդամ այդ «Աղքատ Ղազարոս»ի սուր հոտառութեանդ իբր արդիւնք մարգարէութեանդ Պօհմական սրամտութեանը վրայ, որ փոխանակ հացի փշրանքներովդ՝ գոհանալու, համալամ կերակուրներ կերազես երեւակայական կերպով միշտ, անդադար յօրանջելով . . . :

Գրալուսադրող՝ Նղիս Տէմիրճիպաշեանի անտիպ և ուրիշներու արձակ քերթուածները և անլի ոտանաւորները արդեօք պակասած էին քովդ, որ ելեր «Մասիս»ը կը լեցնես սուտ, անիրական, անստույգ և քմահաճ տողերով խորխորէն համայնագէտի հովեր առնելով:

Կը սիրեմ յուսալ թէ առաջին առթիւ պիտի փութաս պատասխանելու շարժառիթներովդ մէջ, ինձ յոյժ կենսական եղող խնդիրի մասին, լուսաբանելով իրականութիւնը անկեղծ ու անաչառ ոգիով մը:

Մնամ յարգանքներով

26 Մարտ 1908, Քէնկրք

ԱՐՄԵՆ Դ. ԻՍԿԵԳԵՐԵԱՆ

ԿԱՎՌՕՇԱՊԱՏՈՒՄ

« ՀՐԱՊԱՐԱԿԱՆԱՍՏ... »

— Մարկոս, կինդ քեզի կը խաբէ կոր, կ'ըսէին իր բարեկամները:

— Անկարելի է, կը պատասխանէ ան, կնիկս իմ վրաս կը խնդենայ:

— Կը խաբէ՛ կո՛ր, կը կրկնէին անդիինները՝ աւելի հաստատ չեղտով մը:

— Չեմ հաւատար, կը զրպարտէք կոր, կը յարէր միշտ, չափազանց լաւատես իր կընոջը հաւատարմութեանը մասին:

Եւ խեղճ ամուսինը աչքերը դոյ կը յառաջանար և իրիկունները մինչեւ ժամը 2 կ'երթար Սրապին ճակելու, մինչ անդին...

Բայց բարեկամները կը մեղքնային այս ամուսինին վիճակին, որուն չէին յաջողեր խօսք հասկցնել:

— Կնիկս ինծի հաւատարիմ է, կը յանկերգէր ան միշտ, կնիկս ինծի հաւատարիմ է: Եւ երջանիկ կ'ապրէր:

Սակայն վերջապէս օրին մէկը բարեկամներուն համբերութիւնը սպառեցաւ:

— Սիրելի՛ս, ըսին անոր, ամէն օր ժամը տասներկուքին դրացիին տղան տունդ կ'երթայ և կնկանդ հետ կը նստի կոր, ժամը երկուքին տուն երթալուդ՝ տղան ալ քննէ վերջ տունէն դուրս կ'ելլէ կոր:

— Չեմ հաւատար, պատասխանեց նորէն Ս. Թովմասային էրիկը:

— Դուն նորէն մի՛ հաւատար, բայց իրիկուն մը փոխանակ ժամը 2ին տուն երթալու, ժամը 12ին գնա՛ և կնկանդ սիրողը տունդ պիտի գտնես:

— Կնոջս հանդէպ այն տեսակ անվստահութիւն մը չեմ ներեր ինքզինքիս, ըսաւ ամուսինը որ կարծես հաստատապէս միտքը դրած էր մնալ ա՛յնպէս... ինչպէս որ էր:

Բայց բարեկամները ա՛յնքան պնդեցին որ վերջապէս տեղի տուաւ:

— Կնկանս մեղքը կը մտնէք կոր, մեղքը ձեր ձիւրը, ըսաւ, գոնէ իր խիղճը հանդարտեցնելու նպատակով:

Ու, իրօք, անցած չաբաթ գիշեր, փոխանակ ժամը 12ին Սրապին կազինոն երթալու, գնաց զարնել իր տունին դուռը:

— Չա՛թ, չա՛թ, չա՛թ:

Պատասխան չկայ:

— Չա՛թ, չա՛թ, չա՛թ:

Նորէն ձայն չկայ:

— Չա՛թ, չա՛թ, չա՛թ:

Ու եղաւ որ վերջապէս գեղանի կինը եկաւ դուռը բանալ, քիչ մը շուարած վիճակի մէջ:

— Ի՛նչ ունիս, հարցուց ամուսինը, ինչո՞ւ ուշ բացիր դուռը:

— Որովհետեւ... վասն զի... ինչու որ...

— Ի՛նչ, ըսէ՛ նայինք, ինչո՞ւ, պնդեց ամուսինը:

— Չըսուելիք տեղ մընէի, կակազեց կինը, չհասկցա՛ր:

— Շա՛տ աղեկ, պատասխանեց ամուսինը որ այս իրաւացի բնական առարկութեան ըսելիք մը չգտաւ:

Ու դռնէն ներս մտնելով՝ սկսաւ շունի պէս հոտուրտալ:

— Վեր ելլանք, առաջարկեց կինը:

Բայց անիկա սկսաւ սենեակները աչքէ անցընել, soլապները նայեցաւ, բազմոցին տակը աչքէ անցուց... ոչի՛նչ:

— Բարեկամներս պարապ տեղը զիս վախցուցին, կնիկս աշխարհիս էն պատուաւոր կինն է, կը խորհեր ամուսինը, իր ըրածէն ինք ամչնալով:

Բայց մինչեւ ծայրը տանելու համար քննութիւնը, խոհանոց իջաւ, ո՛չ ոք, ո՛չ իսկ արական սեռէ կատու մը:

— Սա հեօմիւրիւկը բա՛ց, ըսաւ կնոջը:

— Ո՛վ պիտի բանայ հիմա, առարկեց կինը, կղպուած է:

— Բանալին բե՛ր:

— Վերն է:

— Բե՛ր կ'ըսեմ կոր:

— Քա՛, խենդ ես ի՞նչ ես, ֆեոմիլիւկը ի՞նչ պիտի ընես:

— Ֆեոմիլիւկերը աչքէ պիտի անցընեմ:

Բա՛ց, չե՛մ բանար, պիտի բանա՛ս, չպիտի՛ բանամ . . .

Վերջապէս, նախանձայոյդ ամուսինը կըրտմըրտալով՝ կոտրեց ածխանոցին խեղճ դուռը որ, հաւատացէ՛ք, եղածին մէջ յանցանք մը չունէր:

Ու քաղլօ՛

Դրացի տունին տղան մոմեայի պէս կեցած էր ածխանոցին մէջ, մեռելի պէս տըժգոյն:

— Հրամանեցէ՛ք դուրս, ըսաւ ամուսինը, որ կարծեմ ա՛լ համոզուած էր կնոջը անհաւատարմութեան:

Ու փողոցէն դուրս նետեց զայն՝ կից մը տալէ վերջ հակափորին:

Ուրիշ ամուսին մը ապահովաբար պիտի սպաննեք զայն:

Բայց ա՛յնչափ տմարդի չէր մեր ամուսինը:

Բարեկամները, որոնք դուռին մօտը կը սպասէին գործին ելքին, ըսին անոր.

— «Երանի՛ անոնց՝ որոնք առանց տեսնելու կը հաւատան»:

×

Հիմա համոզուեցա՞ր կնոջը անհաւատարմութեան, ո՛վ խեղճ Բարեկամս, որ ասկէ վերջը Դատաստ, Խորհուրդին ճամբան պիտի չափես երկարատեւ:

Բայց, դուն որ հաստատ բնաւորութեամբ մարդ մըն էիր, հանգիստդ սիրող այնչափ, ինչո՞ւ ելար կարգուեցար կնոջ մը հետ՝ որ հրաքուխի մը չափ վառվռուն էր:

Հիւսիւսային բեւեռի մը չափ պաղ էիր դուն սիրոյ մէջ, մինչ կինդ . . . Հասարակածին չափ տաք էր:

Ինչո՞ւ ամէն իրիկուն կնկանդ քովը չէիր փութար, փոխանակ կազինոն արտամերթիւն ընելու:

Կինդ սիրոյ կը կարօտէր, և երբ տեսաւ որ այդ կրակը չպիտի կրնաս մարել դուն, նախ խորհեցաւ պահ մը թաղին ջրանկիրները օգնութեան կանչել, բայց դրացիին տըղուն նո՛յնչափ կարող դատեց իր սիրտին ճրդեհը մարելու:

Կ'երեւի թէ դրացիին մանչն ալ ածուխ մըն էր իր կարգին բըռնալի ածուխ որ բռնկելու համար կնոջը կրակին մօտենալը կը բաւէր . . . Եթէ ածուխ մը եղած չըլլար, միթէ . . . ֆեոմիլիւկիդ մէջ պիտի գտնէիր զայն:

Կինդ կը խնդրեր քենէ որ գօլալը օձիք մը անցընես վիզիդ՝ քիչ մը աւելի վայելուչ երեւալու համար, բայց, դուն՝ փիլիսոփայ մարդ՝ կը մերժէիր,

— Խօլալը եախան ի՞նչս պիտի ըլլայ, ըսելով:

Կինդ ալ, որ փիլիսոփայութենէ չէր հասկընար՝ ինչպէս ամէն կին, «խօլալը եախա» յով մէկը փնտռեց և գտա՛ւ . . . զանք որ դուն ալ զայն գտար ածխանոցին մէջ:

Ջերմապէս կը շնորհաւորեմ քեզի որ դաշոյնի կամ ատրճանակի չդիմեցիր կնոջը անհաւատարմութիւնը հաստատած ատենդ գոհացար լոկ պերճախօս կիցով մը:

Բողորովին համոզուեցայ ասով թէ փիլիսոփայ մարդ ես եղեք:

Այս տեսակ զեկզեկ բաներու ա՛յնչափ կաբեւորութիւն տալ չարժեք:

Եթէ կինդ հանածվարած մըն է, ի՞նչ հարկ կայ լալու ողբալու:

Ձեմ գիտեք թէ վաղը ի՞նչ պիտի ըլլաք. — պիտի բաժնուի՞ք թէ պիտի հաշտուի՞ք:

Բայց, ամէն պարագայի մէջ, օրին մէկը կինդ պիտի զղջայ ըրածին:

— Երանի՛ թէ էրիկս չխաբէի, պիտի ըսէ ան,

Միշտ ա՛յսպէս եղած է:

ԵՐՈՒԱՆԻ ԹՕԼԱՅԵԱՆ

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Հանրագիտակի Տնօրէնութիւնը պարտ անձին կը համարի հրապարակաւ յայտնելու իր ջերմ շնորհակալիքը Ազն. Կարապետ էֆէնտի Մալէճանեանի (գործակալ իզմիրի), որուն՝ անդուլ ջանքերուն և օրինաւոր գործունէութեամբը այժօր թերթերը յուսացուածէն շատ ու շատ աւելի ընթերցողներ ունեցած է իզմիրի մէջ:

Մալէճանեան էֆէնտիի համար մեր այս անկեղծ տողերը կը յուսանք թէ՛ մեր միւս Ազն. գործակալներուն համար ալ պատիւը կունենանք տողելու:

ՄԵՐ ԲԱՐՔՆԵՐԷՆ

ԻՐԱՎԱՆ ՄԻՋԱԴԵՊ ՄԸ ԱՊՐԻԼ ՄԵԿԻ ԱՌԹԻԻ

Եկածէն ի վեր, Կոի խանութին երկայնքը կը չափչփէ և մերթ ընդ մերթ պաշտօնեաներէն մէկուն կամ միւսին ոչնչութիւն բուրոյ հարցումներ կուղղէ: Պաշտօնեաները ուրիշ բանէ մը կը վախնան, մի գուցէ Կոի իր խօսական այդ վազքին մէջ աթոռ մը կամ գրասեղան տապալէ, ապա թէ ոչ գիտեն խեղճերը թէ ան անպատճառ ամելիք հաւկիթ մը ունի: (Հարկեցուցիչ պարագայ մը զիս կստիպէ որպէս զի աս երկու բառերը գծեմ, և հակառակ բոլոր բարի կամեցողութեանս, խոստովանիմ թէ, Մ. Կոիի յոռի մէկ յատկանիշն էր, եթէ կուզէք սեպեցէք թերութիւն մը, ֆիզիքական պակասութիւն մը հաւկիթ ամելն):

Հազիւ ուրեմն նստած է գրասեղանին առջեւ, տեղէն կը ցատկէ անանկ ուժով մը որ փախցնել կուտայ քեզ թէ տախտակամածը տեղէն պիտի ելլայ: Կուղղուի դէպի հոն՝ ուր սովոր է paletotն կախել: Մէկ գրպանը 4-5 անգամ կը խուզարկէ և վերջապէս փրնտաւոր կը գտնէ jaquetteին գրպանէն: Majestueux քալուածքով մը կուգայ գրասեղանը գրկել. գտած թուղթերուն ահագին տրցակը — զոր dossier կը կոչէ, noblesse oblige! — սեղանին առջեւ կը փռէ: Կէս մը dépouillé ըրած՝ միտքը կիյնայ որ ակնոցը մոռցած է զետեղելու քիթին վրայ. ուստի dossierն մէկ կողմ կը դնէ և կսկսի cérémonieի մը: Ձեռքը գրպանը կը տանի, նիհար տուփ մը կը հանէ, ակնոցը դուրս կանուէ և քիթին վրայ կը զետեղէ, կարգաւ սկսել է առաջ քանի մը անգամներ երկու ձեռքը քիթին կը տանի, վախնալով որ՝ մի գուցէ ակնոցը թրւած ըլլայ տեղէն և ամէն անգամուն ալ անանկ մը ակնոցը քիթին վրայ կը մխէ, որ վարձեա զայն գամերով բռնել տալ ուղեր քիթին վրայ:

Վերջապէս dossierին թուղթերէն մին կարժանանայ ընթերցման պատիւին:

Չորս ամիս առաջ թաղին եկեղեցւոյն կողմէ խրկուած մէկ նամակն է, որով Մ. Կոիի գթասիրտ ղգացումներուն կոչում կընէին և զոր՝ Մ. Կոի իր dossierին մէջ դրած էր միմիայն սա մտածելով թէ պիտի կրնար զայն ի հարկին օգտակարապէս գործածել՝ ճերմակ կողմը տրամադրելի ըլլալուն: Թուղթը մէկ կողմ կը նետէ, արգահատանքի ժպիտ մը փայլեցնելով մօրուքին ծայրէն մինչեւ կաքաւի աչքերուն անծիր: Կորիզոնին վրայ: (Անհրաժեշտ կը նկատեմ ընթերցողներուս դիտել տալ թէ Մ. Կոիի ժպիտները այնքան սուղ, դժուարին չեն որքան է ... radium ձեռք բերելն): Յաջորդաբար երկու թուղթեր և 4-5 հատ քտոթեր ձեռքէ կանցնէ և առանց բանալու միւս զին կը դնէ: Այդ երկու նամակները և քտոթերը ցաւակցական գիրեր էին բարեկամներէ ուղղուած իր հօր մահուան առթիւ: Եւ ահա ցրուիչը ներս կը մտնէ և 5 հատ նամակ կերկարէ, որոնցմէ երեք հատը դարձեալ ցաւակցական քարթեր էին: Չորրորդը Շուէտէն, morue ձկան իւղի սրուակ մը իբր նմոյշ խրկուած ըլլալն զեկուցանող գիր մըն էր:

Հինգերորդին պահաբանը հազիւ խզեց և ահա divinéաի բուրումը Մ. Կոիի ունեղերը ոչ միայն գգուեց, ուռեցուց, այլ խեղճին գլխուն պտոյտ պատճառելու չափ ազդեց ուղեղին վրայ:

Այս խիստ կանացի բոյրով, կապոյտ թուղթով և դողդոջ ձեռքով գրուած անկանոն գիրերով այդ նամակը, ֆրանսերէն լեզուով գրուած էր: Նամակը կրկին քիթին մօտեցուց, հոտոտեց ... և սուր նայուածք մը ուղղեց, դողացնելու մտօք իր պաշտօնեաները՝ որոնք մէյմէկ ծակ մտած, զինքը կուսումնասիրէին, անոր իւրաքանչիւր gestesերուն, grimacesներուն կը հետեւէին:

Նամակը enveloppenով միասին կրկին քիթին մօտեցուց և երկար, չափ երկար շունչ մը քաշեց, կարծես թափանցել կուզէր ադմystique divinéաին և զայն խրկող խորհրդաւոր պերճ պչրուհիին ինքնութեան: Եթէ դժբաղդութիւն մը կար, ա՛յն ալ նամակին ֆրանսերէն լեզուով գրուած ըլլալն էր:

« Բայց աս անունը որո՞ւնն է, ո՞վ կրնայ եղած ըլլալ Աստուած իմ » կըսէր ինքզին-

քին, դո՛ւնէ կցկտուր բաներ մը հասկնար, բարեբաղդութիւն մը պիտի սեպէր ինքզինքին, բայց իր անբաւական ֆրանսագիտութիւնը պատճառ եղաւ որ շատ գէշ գիրքի մը մէջ տարուբերի:

Շատեր զինքը զարգացած լեզուագէտ կը կարծեն, սա նկատի առնելով որ, իր professionը, — encore noblesse oblige! — կը պահանջէ որ ֆրանսերէն լեզուն գիտնայ, բայց հա՛րկ է անգամ մըն ալ ըսել թէ հաւառակ diplôme մը եղած ըլլալուն նոյն իսկ ֆրանսերէն տարրական բառերը կը խուսափէին իր հասկացողութեան մակարդակէն, ճիշդ... անդիկի կաթիլներու պէս:

Կոի կը մտածէր, « շատ հաւանական է որ լոյս մը աւելի պիտի սփռուի եթէ հաւատարմաբար թարգմանող մը գտնուի »:

Եթէ իր պաշտօնեային թարգմանել տա՛ր, թերեւս գործը ճապաղ հանգամանք մը առնէր, ա՛յ չէր կրնար ըլլալ, « գործը Նեմրաին բանալու է » կըսէր, անիկա շատ զօրաւոր է ֆրանսերէնի մէջ, մի եւ նոյն ատեն անկեղծ բարեկամ մը, այո՛, այո՛:

Անմիջապէս երկտող մը գրեց, խնդրելով որ կարելին ընէ ժամ առաջ իրեն գալու համար: Կէս ժամ վերջ Մ. Նեմրա, Մ. Կոիի դէմ նստած թէյ մը կառնէր և նամակը կը թարգմանէր: Ահա պատճէնը.

« Բերա, Ապրիլ 1907

« Լ. ՏՐ Կոի,

« Վերնագիրէս կրնաս հետեւցնել զայրոյքը զոր կզգամ, հակակրօքիւնը եւ նողկանքը զորս հաւասարապէս ունիմ քեզ նկատմամբ, անարժան noccur! Անցեալները կը գրէիր ինձ քե բաղդին անողո՛ւ մեկ հարուածը վիճակեցուցած է քեզ՝ սուգ մը որ նուիրական է, ու ադ երկնողովդ կը բացատրէիր դառն ահագնութիւնը կեղծ ու պատիւ վեցիդ ու ցաւիդ, որք քեզի պիտի արգիլեն ասեմուան մը համար զիս տեսնելու « երջանիկ » առիթէն, քե բատնն եւ հանդէս ասեմուան մը համար գոց պիտի ըլլան քեզի, եւ վերջապէս Splendide ալ պիտի ողբայ քու բացակայութիւնդ, կերպով մը բաժնել ուզելով սուգդ որ « խիստ նուիրական » է:

« Կիրակի օրն էր երբ « Splendide » եմ

կանցնէի տեսայ որ նստած էիր առանձինն, կուռքի մը հանգոյն, քու սովորական, անբաժանելի տեղդ, ո՛չ սանթիմ մը անդին, ո՛չ ալ միլիմէթր մը ասդին, Սիւրելի՛ս, եւ քեզի արդէն, ժամանակին չէ՛ի ըսած քե սկզբունքի տէր ես, ... պայմանաւ որ խնդիրը աքոռի, նիստ ու կացի բարեւոյնը ցանցնելու վրայ ըլլայ: Ինչպէս քսի նստած էիր, տեսա՛ր զիս եւ ոսկի ... ջո՛ւր ակնոցիդ տակէն քթոդ նայուածովդ ուզեցիր անգամ մըն ալ խայքել վարդ այտերս, քամել աչքերուս սիւրսեցիկ խոնաւութիւնը:

« Բու ինձի գրած նամակդ եւ այդ օրուան գեղ Splendide տեսնալը գլխովին իրաւուն կը հակասեն, եւ բարեկամեղ կիմանամ որ դժբաղդ հօրդ մահուան կիւսակին իսկ, Splendide ելած ես, դառնակսկիծ վեցիդ ամօժումը «traviata»-ն ըմբոխնելու մեջ գտեր ես: Ցաւերդ հանոյի մեջ խեղդել կուզես, օ՛ երանելի՛ տղայ:

« Շատեր նուրբ կենցաղագէտ, գեղեցկագէտ հաւակի տէր մեկը գտած եմ քու մեջդ, աւելորդ է ըսել քե չարաչար սխալած եմ, վասն զի c'est dire քե առածը, որ կըսէ, l'habit ne fait pas le moine, արտաքինը բոլորովին ներհակ է ունեցած զարգացումիդ, կենցաղագիտութեանդ եւ զգացումներուդ: Մի, կեանքի երեւոյթնե՛ր, որքա՛ն խաբուսիկ էի: Սախո՛ւս, կրնաս ուրանալ նամակիդ պարունակութիւնը, հո՛ն գրուած մէկ մի բառ դասապարտութիւնդ իսկ է: Պիտի ուզէի նամակդ բառ առ բառ ընդօրինակել հոս, բայց ո՛չ հիմա, յարմար սեպած եմ զայն ապագայի, ծագիրներուս վերապահել: Վաղը ժամը 2 1/2 ին պիտի անցնիմ հոնկեց, հետեւե՛լ ինձի »:

Միւ. Զիւսկա dos ... (անընթեռնի):

Մ. Նեմրա խօսք առաւ անմիջապէս.

— Կը կարծես որ աս անունով օրհորդի մը մտերմութիւնը վայելած ըլլաս:

== Բնաւ չեմ յիշեր, անկարելի բան է և սխալմամբ հասցէիս եկած ըլլալու է: Եւ սակայն սա՛ ալ կայ որ ըսուածները ճիշդ են, իրաւ է որ հայրս Պալըզլըի գերեզմանատունը տանելնէս վերջ Բերա Splendide-էի և յաջորդող կիրակին ալ traviata-ի էի, աս

ամէնը աղէկ, բայց սա անունը Աստուած
իմ, սա անունը:

— Գիրը ծանօթ չէ՞:

=

— Գիրը չե՞ս ճանչնար, անունը չե՞ս յի-
շեր, divineaի բուրու մը քեզ չի խօսիր, ա-
սոնց ամէնը աղէկ, բայց գոնէ ամիսն ալ
քեզ բան մը չի յայտնեց կոր, և այսօր ճի՛շդ
առաջին օրը ամսուն:

Կոի, Նէմրաի ձեռքէն կառնէ նամակը և
թուականին կը նայի:

« Բերա, Ապրիլ 1907. »

Նէմրա կաւեցնէ, — Յաւարի է որ տա-
կաւի՛ն չես արթննար կոր, նամակին ո՛չ գի-
րը, ո՛չ անունը, ո՛չ divina բան մը չեն
խօսիր կոր քեզ, և սա ամենուն վրայ ես
ալ չեմ կրնար կոր ինքզինքս քեզ հասկցնել,
ուրկէ կը հետեւցնեմ թէ deséquilibre վիճակ
մը ունիս . . . ցտեսութիւն:

Նէմրա անա՛նկ ածապարանքով մը դուրս
ելած էր դուռնէն, որ Կոի ատեն անգամ
չէր ունեցած «ցտեսութիւն» ըսելու:

Միտքը շատ տանջեց և նոյն իսկ գլխուն
ետեւի մասին ձեռքի քանի մը հարուածներ
տուաւ (այս բանը շատ հազուադիւրս պա-
րագաներու մէջ ի գործ կը դնէր, կը կարծէր
որ այդ կերպով ուղիղին, — եթէ ունէր
խեղճը — գրգիռ, զարթնում կուտայ, ըստ
իրեն այս պզտիկ opérationը շատ մը առիթ-
ներով հրաշքներ գործած էր):

Կոի տեղէն ելաւ, խիստ ընկճեալ, վերը
սենեակ առանձնացաւ, քնանալու համար,
ա՛ս ամենավերջին յոյսն էր, կը կարծէր որ
երազին մէջ «յայտնութիւն» պիտի ըլլար:

Անկեղծօրէն ըսելով չենք գիտեր թէ ի՛նչ
երազ տեսած է, սակայն ի՛նչ որ կայ ճշմա-
րիտ իրողութիւն, այն ալ սա է որ չետե-
եալ օրը, 1 Ապրիլ 1907, ժամ 1էն արդէն
Splendide գտնուած էր, իր սովորական տե-
ղէն ո՛չ ինչէզ մը և ո՛չ ալ սանթիմ մը ան-
դին, և կը հաւաստեն թէ ա՛յդ օրը ժամա-
ցոյցի սլաքները ո՛չ ժամը 2 1/2 նշանակած են
և ոչ ալ . . . անծանօթ պըրուհին հոնկէց ան-
ցած:

ԱՐԹՕ

ԴԱՐԱՍԿԶԲԻԿ ԲԱՌԱՐԱՆ

Դ

Դագաղ. — Փայտաշէն պզտիկ դրամա-
տուն մը, ուր տեղ միայն մարդ ամբողջովին
կը վճարէ իր ունեցած հին և նոր երեւելի և
աներեւոյթ պօնօները, չէքերը ու պարտքերը:

Դուռ. — Եթէ գոցելուն կերպը չես գի-
տեր բնաւ մի բանար:

Դժոխք. — Մեր վարժարաններուն զբօ-
սանքի ժամը:

Դեմք. — Մարդուս ամենէն շատ խնամք
վայելող և ամենէն փոփոխական մէկ կողմը:

Դիմակ. — Գործածական բան մը, որուն
չօչափելին միայն բարեկենդանին, իսկ ան-
չօչափելին ամէն օր կը գործածուի:

Դպրապետ. — Առաջ միայն տիրացունե-
րէն կեղւար, իսկ հիմա՝ ալթօյի պէս ամէն
բանէ:

Դրացի. — Կրնաս անոր հարցնել տանդ-
մէկ պա՛կաս բանը, երբ տունիները չեն
գիտեր:

Դրամ. — Ունենալու համար պէտք է
ընես մեքամ, հաւաքելով զայն srամ srամ,
առանց երբէք ուտելու հարամ:

Ե

Երգում. — Առեւտուրին քեզկեանհարը:

Երեւոյթ. — Բան մը՝ ուրկէ մարդ յաճախ
կը խարուի:

Երուանդ. — Թօլայեանին անունը:

Երևոյ. — Հին ու պինդ գլուխ եսկիդա-
ման տիրացու մը, որ եւրոպական երաժշտա-
կան ճաշակին բաց եզած ատեն տնտնաց ու
բացը մնաց:

Եռաձայն. — . . . Տես Ղալաթիոյ դըպ-
րաց դասը:

Երեկոյթ. — Սարքելու համար պէտք է
առնել՝ 12 նարինջ Եաֆայական, 2 օխա խնձոր
Ամասիական, 1 օխա հարթող Այվալքական,
1/2 օխա ծթօղի Զմիւռնիական, 2 տուփ սար-
տէլայաձուկ Նորվեկիական, 1/2 օխա խոխեալ
միս (որ թարգմանի պաստրմա) Կեսարիական,
12 հաւկիթ Նիկոմիդիական, 1 օխա լուբիա
աքլօրական, յետ այնորիկ մայսանոս և ընդ
նմին պայիթ բուռփի, նամանաւանդ սալա-
քա, ինչպէս նաեւս քազէ սողան:

Ենովք. — Առանց Արմէնի՝ մարգարէ,
իսկ Արմէնով՝ մեծ գրական աշխարհին պըզ-
տիկ մարդը:

Յ . . . օրինեց մեծ բառագէտն
ՌՈՄԱՆՈՍ

ՀԱՄՄԷ ԱՍՏՈՒԱԾ ...

Ապաշխարութեան սա եօթը չաբաթներուն, ուր կալուօշն անգամ բարոյախօսութեան վեղարը գլխուն՝ ոչ կրօնաւնտանեկան յօդուածներ կը գրէ Մանգուսի մէջ, ես ալ իմ կարգիս՝ եթէ նմաններու պէս բան մը չգրէի, իմար քոյրերուն պէս լապտեր ի ձեռին դուրսը մնացած պիտի համարէի ես զիս, ահա թէ ինչո՞ւ վերջին այս չաբաթին ի գիր կառնեմ նիւթ մը՝ որ մեծպահօքական ըլլալով՝ կրնայ գոհացում տալ օրը չորս անգամ Սաղմոս քաղողներուն իսկ:

Վերջին տարիներուն մէջ, բժշկութիւնը հաստատեց սա՝ ճշմարտութիւնը թէ՛ տղաբերքի ատեն պէտք է ճանկ ճանկ պողացնել մայրը, և կամ ո՛ր եւ է վերքի համար հարկ չկայ ըլլալուն սպասել, այլ, անմիջապէս գործիքին և կամ նշդրակին դիմելու է:

Եւ տակաւին մեր սուլու-պէյին ծնողքները կսպասեն ու կը յուսան, որպիս զի իրենց աղջիկներուն խսմքը գայ, լենայ ու քացուի, անտանելի կոտորակներու, աներեւակայելի տանջանքներու մատնելով խեղձերը, որոնք յուսահատ՝ Հանրի Բրանձինի պէս կը պոռան *cordon s'il vous plait!* Վերջ տալու համար իրենց անել կեանքին:

Մեր մէջ օրիորդներ կան՝ որոնք թերուս ծնողաց գոհերն են այսօր, և կան ալ այնպիսի աղջիկներ, որոնք իրենց ծնողքը կապիկներու տեղ դրած՝ չղթան քիթերնուն անցուցած, քեֆ ի ձեռին, երգ ի բերան կը խաղցնեն զանոնք, և սխալ չըլլար աւելցնել հոս թէ՛ այդ կարգի ծաղիկները բարաթեայի պէս սփռուած են ամէն ուրեք:

Կուզէ՞ք մօտէն, ու մօտէն օրինակ մը տամ այդ կարգի օրիորդի մը, որ իր ծնողքը խաղալիք ըրած իր քաղցիւններուն, կամ լաւ է ըսել, իր սիրային դարձ դարձիկ արարքներուն, ուզածը՝ կը յաջողի ի գլուխ հանել և այսպէս անցնել իր տնամնացի նեղսիրտ օրերը:

Մի կարծէք թէ միմիայն երաժշտութեան և ձայնագրութեան մէջ գոյութիւն ունին մաժեկոնը և միճեկոնը, քսանը անցուկ օրի-

որդները՝ մաժեկոն ենք կըսեն և կը յոխորտան, որ թարգմանի զոգոխնալ, այսինքն աւելի բացորոշ կամ ձեր հասկնալիք բառով եփայտի՞նք:

Ահա այդ կարգի մաժեկոն՝ սայլըր ֆուրուցա մըն էր ֆիլոսոփ, որուն ձեռքէն քաշածը՝ խեղճ մօրկանը՝ միմիայն Աստուած գիտէր, իսկ Հայրը՝ Կղեմէս աղա, բանին գործին ինկած մարդ, այնքան պարտասած կը դառնար գործէն՝ որ ճաչէն վերջ հազիւ սուրճ մը կը ֆուքէր ու կիյնար անկողին:

Ալ կրնաք երեւակայել թէ՛ ինչե՞ր չընէր աղջիկ մը, որ տկարամիտ ծնողքի մը թույլ հսկողութենէն կօշտուի:

Տեսէ՞ք ֆիլոսոփին խաղը:

Երբ ֆիլոսոփ՝ նիւթին հերոսուհին, տունը ուրիշ մէկ սենեակ մը քաշուած՝ ո՛ր գիտէ ի՞նչ արտառոց յատակագիծեր կը պատրաստէր, ասդին Կղեմէս աղա և Տիկին Ագապի զէմ դիմաց կը խօսակցէին, անշուշտ ոչ Ձիֆթէ-Սարաֆի հեղինակութեան վրայ, և օակայն անզգալարար իրենց միամիտ արկածներուն վրայօք:

— Գեղի բան մը ըսե՛մ Կղեմէս աղա, մեր ֆիլոսոփը չիկայ... բէք Աստուծոյ մօտ է, արեւը սիրեմ...

— Աստուծոյ մօտ ըսածդ մարապետ ըսել է, աս իսէ էրիկ մարդ կը տեսնայ կոր նէ՛ լաստիկ թօփի պէս վեր վեր կը ցատկէ կոր...

— Դուն անանկ գիտես, ես անկաճովս իմացայ, հէմ ալ սըխ սըխ կիմանամ կոր քի գիշերները էրկնաւորին հետ կէօրիւշմիւշ կըլլայ կոր...

— Հայտէ քա, թէրէ՞ եաղի... քու անկաճիդ է եկէր, երկնաւոր ըսածդ, մահալլէին մէջէն չըլլայ...

— Նայէ ասանկ բանը չըսուիք ամա, ա՛նխտար ըրի՞ր քի, ըսելս ինթիզա ըրաւ... մէկաղ գիշեր, հէմ ալ տահա տահա երէկ գիշեր անկաճովս լսեցի քի, համմէ Աստուած տէյի կէօրիւշմիւշ կըլլար կոր...

— Կնի՛կ, խելքդ գլոխդ քեր, հիմա տէր-

տէրները պիլէ Աստուծու դիմացը չին կրնար կոր թէմիզ սիրտով կենար տէ երկու չիֆթ աղօթք ընէր, աս մեր հաֆիֆ խառախուլախը ատոնցմէ ալ արդար եղաւ ...

— Հապա՛, Սօխմարին ճգնաւորին հետ չեմ փոխեր ես անիկայ, դուն անանկ գիտցիր, հաւատք քու կայնեցուցին քեզի, կըսէ գիրքը, զօրքին մեռնիմ, հաւատով է աղջիկս հաւատով ...

— Պէլքի, ինտ չեմ ընէր ամա, իմ աղջիկս է նէ, ես անոր աչքին սեւերուն չեմ հաւնիր կոր, ան աչկը ունեցողը քէք երկինքները չի նայիր ...

— Ինչո՞ւ ատանկ կըսես Կղէմէս աղա՛, աս անկաճովս լսեցի քի, սահաթներով միս մինակ օտային մէջը, թավանները նայելով կէօրիւշմիւշ եղաւ ...

— Դուն դուն եղիր, ինծի ըսիր՝ պաշխասիին մըսէր, զէրէ էքսիկ էթէկ է, աղջիկ զաւակ է, խենթ է տէյի չեն առնէր վերանիս կը մնայ, զաթը ժօտան անցաւ ...

— Ը՛հն ... ճիւղէր թող վլան տէ ճուրը խմեն, անա՛նկ զաւակը ...

— Ձիտեմ ալթըլս, ազմիշ ըլլայ տէ վերայ դընէ նէ չեմ խառնուիր, էկէր իրաւ ատանկ ինքիւրէնը կը խորաթէ կոր նէ, օրը երկու անգամ հորին գլուխը տար թէփէն ի վար պաղ ճուր թափէ քի արունները վար քաշէ ...

— Ձաթը հաւատք չունի՞ք քի, հաւատք ունեցողի մը ըսեմ նէ, սուրբ տէյի հիւանդի վրայ կը տանին կը կարդացունեն, մազէն թիւթսիւ կուտան, ամա ինչ է, մեր աղջիկն է տէյի խենդի տեղ կը դնենք ...

Ու նմանօրինակ խօսակցութիւնները շաբունակելով կը պատրաստուին պառկիլ, ու հազիւ սանդուխներէն վեր ելած թէ չէ, երբ իրենց սենեակը պիտի քաշուէին, Տիկին Ագապի, յանկարծ կը կեցնէ ամուսինը՝

— Նա՛, նա՛, նա՛, անկաճ տուր, կէնէ պաշլայեր է խօրաթան, Կղէմէս աղա ոտքիդ մատներուն վրայ կոխելէն եկուր ...

— Ես ի՞նչ ճամպաղի եմ քա՛, ի՛նչ կըլլաս կոր, ատ ի՛նչ թէլաշ է ...

— Քա նա, մտիկ ըրէ, կը խորաթէ կոր էրկնաւորին հետ ... իմին արդար զաւակս ...

Եւ իրօք Օր. Ֆիլոսօփի, սենեակին մէջտեղը կեցած, դիւահարի մը պէս կը խօսէր,

ու երեւակայական հարցումներու պատասխաններ կուտար։

— Համմէ Աստուած ... ինտո՞ր կըլլայ ... ան ո՛ւր՝ ես ուր ... համմէ Աստուած ... ճէսարէթ չունիմ ... մօրս ինտո՞ր խօսք բանամ ... համմէ Աստուած ... ո՞ր տունը, աս վրայի սօխախին, քէօշէյի մալի պօհալըն ... համմէ Աստուած ... ես ինտո՞ր խօսք բանամ ... համմէ Աստուած ... մայրըս երթայ խօսի ըսիր ... ան աղան ինծի կուտան ... անոնք ո՛ւր մենք ուր ... համմէ Աստուած ... մայրս կրնայ պէճէրուիր ըսիր ... տղուն մօրը հետ մէյմը խօսի՛ր ... մայրս խօսելու ըլլայ նէ աս գործը կըլլայ հա՞ ... համմէ Աստուած ...

— Զօրքին մեռնիմ ... ամա թէվէքէլլի չէ քի կըսեմ կոր քի աս աղջիկը սուրբ է, կէօղ կէօրէ էրկնաւորին հետ կէօրիւշմիւշ կըլլայ կոր տէյի ... հիմա անկաճովդ լսեցիր ես ... կըսէ Տիկին Ագապի ամուսնոյն, որ հոն կեցած մտիկ կընէր ...

— Տա խանտիլը վառէ տէ ես պառկիմ, դուն կլոխդ չալ մը առ նստէ մտիկ ըրէ, չատոնց է քի օր մը Փրկիչ երթամ պարտիմ կըսէիր կոր, հալէսդ առ իշտէ ... ըսելով՝ սենեակ կը մտնայ ...

— Էրիկ մարդ չէ՞ք մի, հաւատք ըսուած պանը թռեր է վրանուդ ... քա իշտէ կէօղ կէօրէ կը խօրաթէ կոր, լսեցի՞ր եա ինչ ըսաւ նէ ...

— Իշտէ ըսածները լսելուս համար կըսեմ կոր քի անկաճ կախելիք բան չէ տէյի ...

— Արեւուն մեռնիմ, Աստուածավախ աղջիկս, ան մօրը զաւակը չէ՞ մի ... նայէ Աստուած պիլէ ինծի օռթան կը դնէ կոր քի երթամ խօրաթուիմ տէյի ... Աստեղը խըլավուղլու աղջիկ կառնէն կոր ճըլխ կելլայ կոր, աս մերինը՝ զօրքին մեռնիմ, էրկնաւորէն պիտի ըլլայ ... կըսէ ու սենեակ կը քաշուի։

Առաւօտուն Կղէմէս աղա կանուխ իր գործին կերթայ, և Օր. Ֆիլոսօփի երբ մօրը հետ դէմ դիմաց կուգան, Տիկին Ագապի, սուրբ պաշիկներով կը թրջէ անոր ճակատը ու երեսները։

— Ախ եավրուս, մաս մաքուր զաւակս, ամա ես գիտէի, հաւատքիս պէս գիտէի քի

դուռն օլուր օլմագներէն չես տէյի, նասըլ քի ելաւ նէ ...

— Ինչ կըսես կոր մայր, երա՞զ կը տես-
նաս կոր ... օր մը օրանց ատանկ բաներ
ըսած չունէիր, կըսէ Օրիորդը անգիտակից
ձեւանալով:

— Օր մը օրանց կըսես նէ չիտակ է, ես
ալ հիչ էրկնաւորին հետ լախըռաւ ընելդ տե-
սած, իմացած չունէի տէ ան է քի ինքի-
զինքմէս ելայ ...

— Աման մայրիկ ինչե՞ր կըսես ... նա-
սըլ երկնաւոր ... ե՞րբ խօսեր եմ ...

— Անանկ կըլլայ աղջիկս, վախտին քէօչէ
պախան մը կար, ինքիզինքը խայիպ կընէր,
քէօչէն կը նայէր տէ անանկ ֆալ կը նայէր,
եղածը չեղածը կը զրուցէր, դուռն ալ անանկ
ես եղե՞ր ամա, ինչ գիտնամ եամբուս, նա-
յինք ան թառաֆէն ի՞նչ կըսեն ...

— Որ թառաֆը մայրիկ, չեմ հասկնար
կոր, բան մը ըսել կուզես կոր ամա՞, չեմ
հասկնար կոր ...

— Կայնէ դուռն եամբուս, նօհուտու թօ-
փիկին փօրը չինեմ չակեմ տէ անկէ ետքը
վրաս հագնիմ երթամ պիտի, չիւնքիւ ասանկ
բանը անկաճի էտի ձգելը մեղք է ...

— Չեմ հասկնար կոր մայրիկ, ուզածդ
կրնաս ընել, ես բանէ խապար չունիմ ...
ըսելով օրիորդը լարած թակարդին յաջողե-
լուն ուրախութեանը մէջ կը բաժնուի նա-
խաճաչը ընելու, մինչ տիկին մայրը գործերը
կարգադրելով՝ տունէն դուրս կելլայ, չիտակ
էրկնաւորին ըսած տանը դուռը ափ առնելու:

Փողոցին անկիւնի կապոյտ տունը կը բը-
նակէր բարեկեցիկ ընտանիք մը, որոնք մանչ
զաւակ մը ունէին, չիք աղուոր, աղայ մը
որ բոլոր թաղին օրիորդներուն բերնի շողիկ-
ները կը վազցնէր, երբ փողոցէն կանցնէր:
Շատեր ձեռք ձգել ուզած էին այս տղան,
բայց չէին յաջողած:

Հիմա տեսարանն է բարեկեցիկ տղուն
տունը, ուր դուռը բացուելուն մաքուր գոգ-
նոցով սպասաւոր մը կը հարցնէ,

— Ո՞վ կուզէք տիկին ...

— Հիչ, քէօչէյի պէրնի մավի պօեալը
տունը աս չէ՞ ...

— Այո՞, բայց խրամանքդ ո՞վ տիեանել
կուզես ...

— Տունին Տիկինին հետ երկու չիֆթ լա-
խըռաւ ունիմ ընելիք ...

— Կեցէք որ իմաց տամ, ըսելով պու-
թօնին կը դպի և վերը ճճու... ու... ու...
կը ձայնէ և իսկոյն սպասուհին սանդուխին
գլուխը կուգայ կը կենայ ...

— Բիօս ինչ՞ ...

— Քա չէ եաղլըլ եմ եկեր ... աս Հոռ-
մի տուն է եղեր, աֆ կընես ...

— Հոռոմի տուն չէ տուտու, սպասուհին
է, եկէր է ուր հարցնէ թէ խրամանքիդ
էօվ կըսուիք ...

— Հա՞ ... սանկ ըսէ, զէրէ Աստուծմէ
խրկուած եմ տէ, անոր համար շաշմիշ եղայ
քի հիչ եաղլըլ կըլլա՞յ տէյի ... ես միւլայիճի
Կզէմէս աղային կընիկն եմ, քիչիճիկ մը տի-
կինը տեսալ կուզեմ կոր ...:

Սպասաւորը պէտք եղածը կիմացնէ սպա-
սուհին, ան ալ լուրը տալէն հինգ վայր-
կեան վերջ կուգայ հրամանել հիւրը:

Սքանչելի շտկուած տուն մը, ամբողջ
գորգերով ծածկուած մաքուր ու կոկիկ, ու-
րուն նրբանցքներէն ներս մէջէ մէջ սալօն
մը կառաջնորդեն տիկին Ագապին, ուր կեր-
թայ կը նստի ապուշ ապուշ չորս դին նայե-
լով և ինքնիրեն կը խօսի ...

— Չօք չէ՞յ ... էօմբիւս մէջը ասանկ
տուն տեղ տեսած չունէի ամօթ չէ՞ եա ...
է՛հ, ինչ պիտի ըլլայ, զէնկինի տուն, չորս
դին օսկի են սերքմիշ ըրեր, Աստուած ալ
սիրտիս կէօրէ աղջիկս ասանկ տեղի մը հարս
լայրխ է տեսեր ... ան ալ իմ սիրտիս մաք-
րութիւնն է ... ես չիյտեմ ինքիզինքս ...
իշտէ վախտին ճահիլի հետ ույմիշ չըլլալուն,
էրիկէն պաշխասին չի նայելուն, ֆըռթըխ
ֆըռթըխ անոր ասոր հետ օյին չեկալուն պը-
տուղը աս է, նայէ՞, չեղաւ նէ էրկնաւորը
աղջկանս հետ խօսեցաւ, աս գործը օթթան
հանեց, հէմ ալ միջնորդ տէյի իս փէշ քա-
չեց ... չիյտե՞մ ... անկըճով իմացուց նէ ...

Ու պիտի շարունակէր խօսքը, յանկարծ
մէջի դուռը բացուելով՝ ճոխ ուօպ քը Եամպո
հագած 45էն 50 տարուբեր տիկին մը ներս
կը մտնայ, և գլխով բարեւելով՝ քան սրային
մէկ անկիւնը կանցնի կը նստի ... և սա բը
ըսենք որ տիկինին ներս մտած ատեն Ագա-
պի տեղէն չերեար:

— Աֆ կընես վայում էր քի ոտքի վրայ ելլայի ամա, էրկնաւորին թառափէն գալուս համար մեղքը չի մոնամ տէյի չեւայ ...

Տիկինը շփոթելով՝

— Նասը՛լ երկնաւոր ... չեմ ճանչնար կոր ներեցէք, դուք ո՛վ կըսուիք ...

— Իմին ո՛վ ըսուիլս անխտար մի փնտըռէր ... որի՛ն թառափէն գալս հարցուր քի ըսեմ ...

— Շատ աղէկ, որի՛ն կողմէն կուգաս կոր և ի՛նչ բանի համար ... կըսէ տան տիկինը, ձեռքերը շփելով։

— Նասը՛լ հասկցունելու է քուրս, իշտէ էրկնաւորին թառափէն եկողը հէլպէթտէնէ քի խերով բանի մը համար է, պիտի ըսեմ ամա չիտեմ քի, երեսդ լուացեր տէ աղօթքը Դ ըրե՛ր ես ...

Տան տիկինը երթալով կասկածներ կուռնենայ թէ ի՛նչպիսի հիւրի մը հետ է գործը, և իսկոյն կոճակին կոխելով սպասուհին կը կանչէ և ականջն իվար կը հրամայէ խոհարարին դուրսի դրանը մօտը կենալ, ի պահանջել հարկին ներս վազելու համար ...

— Երեսս ալ լուացեր եմ, աղօթքս ալ ըրած եմ տիկին, ինչ որ պիտի ըսէք կրնաք ըսել, կը յարէ տան տիկինը աչքերը իր հիւրին վրայէն ասդին չառնելով։

— Քուրս, աս դիչերով թամամ երեք կըլլայ կոր քի, աղջիկս՝ Ֆիլոփիկս, էրկնաւորին հետ կէօրիւշմիւշ կըլլայ կոր ...

— Աղէկ, ան է քի ատանկ է նէ, ինչո՛ւ մէյմը տօթթոռ Քասքոսին չէք ցուցունէր կոր, տահան կայ, էկէր քի փարայէն ելլալ չէք ուզեր նէ, օրը հարցուցէք տէ հիւանդանոց տարէք, ես իրիկունը էֆէնտիին ըսեմ տէ քեզի քառթ մս տայ, անոնք աղէկ կը նային ...

— Վա՛յ, վրան բարի, հրամանքդ հիւանդ ունիս նէ բեր տէ վրան նէֆէս մը քաշէ ... դո՛ւն ի՛նչ կը զուրցես կոր ... աղջիկս հիւանդ չէ, զօրքին մեռնիմ, անխտար սիրտը թէ՛միզ է քի ... կայնէ օր նախ չէմ ... մեղա՛յ, վրան բարի, սա նայէ կիւլ ֆիտանի ճիշտս ...

— Ինչ գիտնամ, երեք գիշեր է ինքնիւրենը կը խօսի կոր ըսիւր նէ, խելքս հոն գը-

նաց, որովհետեւ ջղայինները այդ անսակ բաներ կընեն ...

— Կայնէ օր նախիւմ եղածը, դուն ալ չաշմիշ եղի, լսողն ալ թող ըլլայ ... , երեք գիշեր է քի աղջիկս, Ֆիլոփիկս օտային մէջը էրկնաւորին հետ կէօրիւշմիւշ կըլլայ կոր, էրկնաւորը, զօրքին մեռնիմ, աս տունին պոյսեովը, պիլիմովը թարիֆ է ըրեր քի, ես անկաճովս լսեցի, ելայ եկայ, նասըլ քի ծառքովս դրածիս պէս ալ գտայ նէ ... նայէ սա գործին մէջը խլավուզի հախ, ֆալան ֆիլան չիգայ, ես մարն եմ, իշտէ եկայ քի աղջիկս առնես տէյի ...

— Աղէկ ամա, ես մերինէն խօշնիտ եմ, օթթայի պէսլէմէս հոռոմ է ամա ... շատ աղէկ աղջիկ մըն է, հիմակու հիմա ի՛նչ ըսեմ տէ ճամբեմ ... պէտք ըլլայնէ խապար կուտամ ... ո՛ւր կը նստիք ...

— Հէ՛ ... նասը՛լ պէսլէմէ ... իս թէլլա՛լ գիտցար ... քեզի չըսի՛ քի ես էրկնաւորին թառափէն կուգամ կոր տէյի ... գըլլա՛լ պէլա՛ կուզես կոր ...

— Ներեցէք, հապա ի՛նչ է ուղածնիդ ... չեմ հասկնար կոր ...

— Ձի հասկնալու բան չիգայ ... չօգ չէյ ... սա նայէ խօլթուխներու տիպը չըբն իչի ջրոտեցաւ քա ... , որ սահաթ է չըսի քի էրկնաւորը, աղջկանս հետ խօրաթեց, խըսմէթը ցուցուց տէ ես ալ անոր համար ելայ եկայ տէյի ...

— Ի՛նչպէս խըսմէթ ... որի համար է ատ խըսմէթ ըսածդ, չեմ հասկնար կոր ...

— Իշտէ ճանըմ, զաւկիդ, տէլիխանլին համար կըսեմ կոր, իշտէ Աստուծոյ հրամանովը աղջիկս ան պիտի առնէ ...

Տիկինը քրքիչներու մատնուելով՝

— Քոյրս, ես մանչ զաւակ չունիմ, բայց մանչ մը ունինք որ երիտասարդ է և ամուսինիս գործերը կը տեսնայ ...

Հէ՛ ... Տէ՛ր ողորմուայ ... աս տունը տէլիխանլը մը կայնէ քու զաւակդ չէ ...

— Ձէ՛ ... , անիկայ մեր սպասաւորն է ... բայց սա ալ ըսեմ որ, խօսք եմ տուած, կարգուի նէ կէս ոսկի պիտի աւելցնեմ ամսականը, հէմ ալ մեր էմէկտար աչճին ալ կնքահայր պիտի ընեմ, ծախքերը մենէ ...

— Վույ ծունը գլխո՛ւս ... ոտքդ պագ-
նեմ քուրս, աղէկ մտմտայ, չիւնքիւ ասիկայ
անոր ասոր լախըւտըն չէ, էրկնաւորին թա-
ռափէն կուգամ կոր ...

— Որին թառափէն գաս նէ եկուր, աս
ասանկ է, ես մանչ զաւակ չունիմ ...

— Է՛հ ... աֆ կընես, ըտելով խեղճ
մայրը դուրս կելլայ տունէն այնքան տխուր
այնքան սիրտը կոտրած:

Տուն հասնելուն, Օր. Թիւոռիկ զինքը կը
դիմաւորէ:

— Ո՛ւր էիր մամա ... կէնէ ո՛ւր փչեց
հովը ...

— Սուս ազջիկ սուս, աճապ ետղլը ի-
մացայ տէ պաշխասիին տունը ծառք առի...

— Ո՛ր տունը մամա, ի՞նչ կըսես կոր...
չեմ հասկնար կոր ... կըսէ Թիւոռիկ:

— Ճանըմ օռթան հանեմ պիտի իշտէ,
քանի իրիկուն է ներսի օտադ կը քաշուէիր
էրկնաւորին հետ կը խորաթուէիր կոր, մէ-
ռաք ըրի, մտիկ ըրի իշտէ, ըսիր քի քէօչէյի
մալի պօեալը տունը, զէնկին տէլիխանըն,
ինծի կառնէ մի չառնէր մի տէյի, ես ալ մար
եմ գտնուէր նէ, ելլամ երթամ սա գործը
զլոխ հանեմ ըսի, ֆախաթ ...

— Է՛յ ... ֆախաթ ի՞նչ ... չարուի
ըսէ մամա, ի՞նչ ...

— Իրաւ քի աֆ տունը տեղը գտայ
ամա, հոն աֆիխանը չիգայ, կնիկը մանչ
զաւակ չունի եղեր, մանչ մը ունի եղեր
սիւսիւ քի աղային խզմէթեար նէ եղեր,
հէմ ալ կարգուի նէ աչճին կնքահար պիտի
ըլլայ, մասրաֆները իրենք պիտի ընեն ...

Օր. Թիւոռիկ չը կրնալով ինքզինքը զըս-
պել, հոն բազկաթոռին վրայ խնդալով կը
փռուի բարձրածայն գոչելով,

— Աֆ կընես մամա ... յոգնեցար ամա
Ա.ԳՐԻԼԻՆ ՄԷԿ ՆԷ ...:

ԼԻԼԱ(*)

(*) Կարծեմ թէ Ապրիլ մէկի այս յոգուա-
ծը միայն Թիւոռիկին մաման չէ, այլ դուն
ալ կլեցիր Ազնիւ ընթերցող, չէ՞ ...:

Ծ. Լ.

ՄԱՅԵՐՏՈՒԿՆԵՐ

ԱԼՔՈՒԱՄՈՒԻ ՄԸ ՇՈՒՐՋԸ

Դասցի գտայ զինքը. ալքուամու մը մին-
չեւ մազին թելը:

— Գուղում տղաս, ըսեր էր ինծի անոր
կինը, մէկ ճա՛ր մը սըւոր կինովութիւնը մոռ-
ցունել տալու, տուք տասնիկ պաները բէք
աղէկ կիտէք, աման ետվրում:

Այո՛, ասոր վրայ էր որ էրիկը գտայ այն
պահուն՝ երբ գինետան մէջ իր սովորական
տեղը կը պատրաստուէր նստելու:

Մօտեցայ անոր, եւ ուսին քանի մը փա-
փուկ փայփայանքներ տալէ ետքը.

— Կորեկ աղա՛ կորեկ աղա՛, ըսի, աչ-
քըդ լուս, աչքըդ լուս...

— Հա՛մմէ, ըսաւ ու ձեռքը վերցուց՝
Ոսկեղջիւրի նաւապետներուն պէս, օղին ա-
պըսպրեցու՝ երբ յանկարծ թեւը բռնեցի ե՛

— Ոճիր ոճիր ոճիր կը գործես կոր Կո-
րեկ աղա, եւ սա վայրկեանէս սկսեալ աչ-
քըդ լուս, հարստութեան մէջ ես ալ ...

Աչքերը, որոնց մէջ ալքուլը իր աւերը
գործեր էր, այդ մոլորուն աչքերը դարձուց
ու բացաւ, ըացաւ ու երեսո նայեցաւ. ես
ո՛վ էի, որ եկած դէմը կեցած... հոգեաւորին
պէս, զինքը իր սիրած հեղուկէն, իր հացէն
կը զրկէի...

— Քալէ քալէ, սըկէ դուրս ելլանք,
սա դժողքէն դո՛ւրս ելլանք, ըսի ինքզին-
քիս Տանթէի հովը տալով:

Ճանչցաւ ինծի ու նստիլ ջանալով.

— Մարտիկ, ըսաւ, Մարտիկ, հարըս-
տութեան խօսք կընես ու չես ձգեր որ օղիս
խմել շարունակեմ...

— Վա՛ղը կը շարունակես Կորեկ աղա.
Ես անանկ կը կարծէի եւ անանկ համոզ-
ուած էի, որ անպատճառ տա օրը Կորեկ
աղաի ալքուամուլութենէ դա՛րձ մը ընել պի-
տի տայի:

— Բանե՛ր ունիմ քեզի ըսելիք, աւել-
ցուցի, որոնք չահերուդ միծապէս պիտի

Նպաստեն՝ նպաստելով նաեւ քուկիններուդ.
հայտէ քալէ՛ր Կորեկ աղա.

— Բայց ինչպէ՛ս, ինչ անողոքաբար,
առանց խղճիդ խորհուրդ հարցնելու քալէ՛ր
կըսես ու չես ձգեր որ գաւաթիկ մը օղի
ճնկեմ, Մարտիկ խնդրեմ.

— Վա՛ղը...

— Այսօր չըլլա՛ր...

— Վա՛ղը...

— Գաւաթ մը, մեծ գաւաթ մը կամ
խիստ փոքրիկ գաւաթ մը...

— Վա՛ղը...

— Մառնոց մը...

— Վա՛ղը...

— Շրթունքներս դպցունեմ, համը...

— Վա՛ղը...

— Հոտուրտա՛մ...

— Մի՛շտ վաղը Կորեկ աղա...

Լաց մըն է փրցուց Կորեկ աղան, տնանկ
լաց մը ո՛ր՝ Գօքաի խաղերուն ու մեր դրա-
ցիին ալ... խաղերուն ձայնը կը յիշեցնէր...

Առիթը չիտալուցի, անոր թեւէն բռնե-
ցի ու քալեցին առջեւը երթալով քառորդ
մը նետեցի գինեպանին։ Գինեպանը երեսս
նայեցաւ եւ յարեց.

— Դո՛ւք, աղինւ մարդ էք եւ աղինւ
մարդ ըլլալնիդ անկէ յայտնի է որ՝ առանց
բան մը առնելու քառորդ մը կը ձգէք Բա-
գոսի տաճարին գանձանակը. բայց աւելի
աղէկ կըլլար եթէ այս քառորդը չտայիք
ու Կորեկ աղան մեզի ձգէիք. բայց ամէն
պարագային աղինւ մարդ էք եւ...

Դեռ պիտի շարունակէր եթէ Կորեկ ա-
ղային հետ փոզոցը չգտնուէի, Կորեկ աղաի
հետ՝ որ աղու պէս կը հեծկտար։ Շուտ մը
սրճարանէ մը ներս խոթեցի Կորեկ աղան։

— Խախտէ կուզես չէնէ թէյ Կորեկ աղա.

— ...

— Կորեկ աղա՛ կարծեմ թէ դուն խախ-
տէն սատէ կը խմես...

— ...

— Եա՛ չէնէ լէժօնաթա մը...

— ...

— Կաղօզ, կաղօզ մը...

— ...

— Հապա ի՛նչ կուզես...

— Աչքէս գաւաթ մը օղի թիւթմիւշ
կըլլայ կոր՝ օղի չկայ աս տեղուանքը...

Ո՛հ, փրկութեան ճամբան դեռ մշուշ կար։

— Կորեկ աղա, ախպար վազ եկուր սա
օղիէն, փսփսացի։

— Ա՛ս ըսելու համար հոս բերիւր դիս,
ըսաւ ոտքի ելլելով, հապա հարստութիւնը.

— Նա՛, նա՛, նստէ՛ նստէ՛, ասոնց մէ-
ջըն է, ըսի գրպանէս հակալքօրական յօդ-
ուածներու ծրար մը հանելով։

— Աս թուղթերո՛ւն մէջն է ըսաւ.

— Հապա՛, ըսի ու սկսայ յօդուածները
կարդալ, եւ ինք, սկսաւ մտիկ ընել ուշա-
դիւր՝ աչքերը սրճարանին մէկ անկիւնը տըն-
կած...

Մտիկ կընէ կոր ըսի ու սկսայ կարդալ
մէկիկ մէկիկ։ Տասը վայրկեան կարդալէ ետ-
քը յանկա՛րժ ըսի.

— Նայէ՛ նայէ, սա ալքօլամոլութեան
հանելիութեանը նայէ անգամ մը, տե՛ս ու
սոսկացիր, նայէ՛ նայէ՛, ի՛նչ վիթխարի վի-
շապ մըն է որ ահա ահա, վրա՛դ կուգայ։

Եւ աս խօսքերը արտասանած ատենս
ձայնիս մէջը ի՛նչ մը կը դնէի, որ ես իսկ կը
դողայի... ու ի՛նք, Կորեկ աղան միշտ
մտիկ կընէր՝ աչքերը սրճարանին անկիւնը...

Էհ, թերեւս փրկուած...

Յօդուածները լմնցան ու անոնց եզրակա-
ցութիւնը հանելէս ետքը՝

— Կորեկ աղա, ըսի, հայր ես ու գաւակ-
ներ ունիս, մեղք է անոնց գիտցած ըլլաւ.
Բայց խախտէ մը կուզե՛ս.

Մատը սրճարանին դէպի դիտած անկիւ-
նիկով.

— Սա՛, սա՛ չիչը, որ երեք քառորդէ
ի վեր է կը գիտեմ, արդեօք օղիի՛ չիչ
է, հարցնել տալիւ Մա՛րտիկ...

Թի՛ւհ, փրկութիւն հէ՛...

Բայց նորէն չվհատեցայ...

— Սա՛ գէժքիդ գոյնը նայէ, բայց նա-
յէ նայէ, որ տեսնաս ու համոզուիս. մազե-
րդ նայէ, ալքօլ կը հոտին կոր, հոտուե-
լիքներէդ ալ ալքօլ դուրս կը պոռթկայ կոր,
արդեօք, ո՛վ գիտէ, աղիքներդ ի՛նչ ջուրի
մէջ են, խեղճ մա՛րդ, ու սկսայ հեծկտալ։

— Այո՛, այո՛, ներսիդիս կայրի՛ կոր,
պատասխանեց ինք ալ լսով։ «Ինչու»ն չը
հարցուցի՝ վախնալով որ «օղին չխմելէս է»
վրայ կը բերէ...

— Բայց հոգդ մի ընդեր կորեկ աղա, ես քեզի պիտի փրկեմ քանի որ ներսիդիս կայրի կոր կըսես: Կորեկ աղա, եթէ ասանկ խմելդ չարունակես՝ աչքերուդ բեքե պիտի իջնայ...

— Մըսեր Մարտիկ, կինս, զաւակներս:

— Ոտքերուդ եմս պիտի իջնայ...

— Աման լռէ՛ Մարտիկ...

— Չերքերդ պիտի դողդղան:

— Աման աման, հի՛ւ հի՛ւ հի՛ւ...

— Չաւակներդ չնորհիւդ քիւֆեքի պիտի ըլլան, հապա քուլուկապանի հարիւրին հարիւր, հապա կինդ՝ ան ալ լաթ լուալու պիտի երթայ քու ասանկ խմելուդ համար. բայց կորեկ աղա՛:

— Համմէ՛...

— Չես տեսնար կոր, նա՛ նա՛ նա՛, ալ քօլամուլութիւնը, այդ անուի ճիւղը՝ որ եօթը գլուխներ ունի և որ անա անա անա վրադ կուգայ կոր, ամա՛ն ամա՛ն...

— Լռէ՛ ալ, լռէ՛, ըսաւ լալը չարունակելով, ալ պուտ մը բերանս չպիտի դնեմ, ատ ի՞նչ անուի վիշապ մը ու ճիւղ մըն է եղեր սա՛ ալ քօլամուլութիւնը՝ որ անա վըրա՛ս կուգայ, հիւ հիւ հիւ...

Ո՛հ, փրկուած վերջապէս: Օ՛խ, ձգեցէք որ գոհունակութեան շունչ մը քաշեմ: Հոտ, սրճարանին սեղանին քովը, ոտքի կայնած, գլուխս ոտքերուս տնկած, աջ ձեռքս սրտիս վրայ՝ ձախն ալ խղճիս վրայ, խորհուրդաւոր ձեւով մը ուխտեցի ալ բոլորովին ինքզինքս նուիրել ալ քօլամուլները փրկելու պաշտօնին: Արդէն կորեկ աղաի պէս՝ ալ քօլը մինչեւ ողնահարին ծուծը անցած մարդ մը երբ կը փրկեցի, ո՛ւր կը մընան միւսները, անոնք որ դեռ նոր ընկղմած են ալ քօլին մէջ: Ոտքի ելաւ կորեկ աղան.

— Քալէ՛, ըսաւ, ալ որոշեցի նոյնիսկ գինետան առջեւէն չանցնիլ, չնորհակալ եմ քեզմէ որ զիս փրկեցիր, բայց ի՞նչ սոսկալի ու վիթխարի ճիւղ մըն է եղեր աղ Ալքօլամուլութիւն ըսուած վիշապը. հայտէ քալէ ո՛վ իմ բարեբարս, քալէ երթանք եւ Մէթ-Մէկ Թէթ իմ խնայողս, քալէ տուներնիս հասնինք.

Ե՛ս չեմ եղեր ալ քօլամուլները փրկողը...

Անմեռուկ՝ Վ. ԳՐԸԲՃԵԱՆ

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ԲԵՐԱ. — Եռաձայնին նորակազմելի խումբին անդամները, նկատելով որ տանը մէջ անտանելի կըլլայ կոր երգերու փորձերը, չորսի դէմ տասնընորս քուէով որոշեցին այն փորձերը օգ մէյսանին կատարել:

ՆՈՅՆ. — Անցեալ իրիկուն փոքր հովին դէմ Սկիւտարցի տիկին մը, երբ Գուլէ Դաբուէն վար կիջնար, նոր գնած գլխարկը օդը գնաց, պատճառ... որովհետեւ երկու ֆիւթին հինգ զրուշ տալ ուզած չէր. մինչդեռ տեղացի տիկինները հինգ ոսկիի ֆիւշ կը բանան:

ԲԱՆԿԱԼԹԻ. — Չմեռ կիրակիները մահալէպիճի խանութներուն խորը փոսի փոսի բամպուղի խաղացող նորածիւ սիրակըցորդ վառեակներ, գարնանամուտն օգտուելով, Շիշիի կողմը սկսած են յաճախել:

ՍԿԻԻՏԱՐ. — Ալէմ տաղի օթօմօպիլ բանեցնելու անուշ լուրը առնող համբաւաւոր պանդոկապետ Յովակիմ աղան. թէեւ առջի բերան ուրախութենէն ցնծաց ու խայտաց, բայց վերջէն այդ լուրին շուրջ ինչալը իմանալով՝ ինքն ալ պաղ տուշ մը առաւ կըսուի:

ՆՈՅՆ. — Տեղացի Տիկիններէն և Օրիորդներէն կը խնդրուի որպէսզի երբ Ս. Խաչ Եկեղեցին գտնուին, ինքզինքնին Ձինիլի բաղնիքը կարծելով չը ճլճան, եթէ ոչ իրենց տունը, զէթ Աստուծոյ տունը յարգելու համար:

ԳԱՏԸ-ԳԻԻԴ. — Անցեալ իրիկուն սինէմաթօկրաֆէն դարձող երկու շշանածներ, չոգենաւին մէջ այնքան խորախորհուրդ մը տածումներու կ'ենթարկուին, որ անզգալաբար կրկին կամուրջ կը դառնան՝ աներեւակայելի կասկածներու մատնելով աղջկան ծնողքը: (Հիմա մօտա է, աղօթեցէք որ գիշերը Բերա չեն մնացեր ուրիշներու պէս Ծ.Խ.):

Արսոնսկի ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐ. Ե. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Պապը-Ալի Եասէսի քիւ 52.

ՄԵԾ Վ ԱՃԱՌԱՏՈՒՆ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ

Արսնց, Կանսնց եւ Տղայոց
ՊԱՏՐԱՐՈՒՄ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Կ. Պոլիս, Սուրբան Համան, Թօփալեան խան
Սոյն վաճառատունը, որ տարիներէ
ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց
տոկոսութեամբ եւ գինեւոր անմրցելի
աժանութեամբ յահած է բոլոր իրեն
դիմող յաճախորդաց վստահութիւնը,
այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր
հագուստներու, կանանց բոլորիկներու
եւ տղայոց շիք եւ դիմացկուն փոքրիկ-
ներու ճոխ միջերք մը պատրաստ ունի,
որ ջերմապէս կը յանձնարարուի ամէն
անոնց, որոնք պէտք ունին ներկայ
եղանակին հագուստի եւ ուրիշ նմանո-
րինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զրոյ է:
Գաւառներէն յանձնարարութիւնք
փութով կը կատարուին: 50 — 28



ԱՌԻԹԷՆ

ՕԴՏՈՒԵԾԷ՜Բ

ՓՈՒԹԱՅԷ՜Բ ԳՆԵԼ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ

Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆԷ

Ճեառ պէյ խանիկ
սակ

Թէյի մեծ վաճառատան թէյերը,
որք ուղղակի ներածուելով Սեյլանէ,
Քինասսանէ, Հնդկաստանէ, Ճապոն
եւ Ճապոնէ:

Ամենէն դժուարահաններն իսկ կը
նան գոհանալ թէյերու թարմութեամբ
հոտովն ու համովը:

Փնտռեցէք մանաւանդ իրենց յա-
տուկ խառնուրդները, որք կը ծախ-
ուին մեծ եւ փոքր քանակութեամբ:

Ուշադրութիւն մարտային:

ՀԱՆՐԱՊԵՏԱԿ

ՊԱՏՆԵՐԱԶԱՐԴ ԵՄՔԱԹԱԹԵՐԹ

16 ՄԵԾԱԴԻՐ ԷԶԵՐՈՎ ԵՒ ՃՈՒ ՊԱՏՆԵՐՆԵՐՈՎ ՀԱՄԵՄՈՒԱԾ

Կ. Պոլսոյ համար տարեկան բաժնեգին	50 դր.	Վեցամսեայ	25 դր.
Գաւառաց համար	» » 54 »	» »	27 »
Արսասահման	» » 12 Ֆր.	» »	6 Ֆր.

Կ Ա Ն Խ Ի Կ

ՀԱՍՑԷ՜

ՂԱԶԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ, Պսպը-Ալի հասսեւի Ասասուրեան տպարան քիւ 52.

Գաւառներու մէջ գործակալներ կը փնտռուի, պայմանաւ որ երաշխաւորվու յոյց տան
թէ միշտ նոր բաժանորդներու անունին եւ հասցէին կցեն նաեւ բաժնեգինները:

Իրամները պէտք է զրկուին կամ Օսմ. Մանտաքութով եւ կամ բաւթայի փուլով 20 հաւ
20 զրուչի հաշուով:

ՕՐՈՒԱՆ ԳԻՐՔԸ
ՄԵԾ ԲԱՌԱՐԱՆ

ՀԱՅԵՐԷՆԷ-ՕՍՄԱՆԵՐԷՆ

ՀԵՂԻՆԱԿ

ՊԵՏՐՈՍ ԷՖ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Պէրպէրեան վարժարանի բանիւրուն տնօրէնը՝ Պետրոս ԷՖ. Կարապետեան, իբր շարք մը օգտաշատ հեղինակութիւններուն կը բերէ կցել իր ստուար գործը Հայերէնէ-Տաճկերէն բառգիրքը, հատոր մը՝ որ անհրաժեշտ է ամէն դպրոցականի և ամէն անոնց՝ որոնք Օսմ. գեղեցիկ լեզուն հիմնովին սովորել կը փափաքին:

Պետրոս ԷՖ. Կարապետեան իբր առաջնակարգ ուսուցիչ Օսմաներէնի, լեզուին բոլոր նրբութիւններուն գիտակցարար հեղինակած է այս ընտիր բառարանը և իր կողմէ ճոխ յաւելուածներով՝ պիտանի հատոր մը դարձուցած է զայն:

ԳԻՆ 35 ՂՐՈՒՇ

Կեդրոնացեղին՝ ՊԱԼԵՆՑ գրատուն.

ԳԱՌՆԻԿ ՔԵԾԻՇԵԱՆ

ՆՈՐ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Կ. Պոլիս Հաճօ-Բուլօ խան իրւ 2

Նախ փորձառուները, յետոյ խառնուղիները միայն գիտեն էթ ո՛րչափ դժուար է, դանել ու գնել ապրանքներ՝ որոնք թէ տոկոսն ըլլան՝ թէ ճաշակաւոր և թէ . . . աժան:

Գառնիկ Բէշիշեան վաճառատունըս թօհաֆիէի էն առաջնակարգ Եւրոպական գործարաններէն բերել տուած է տեսակ տեսակ կանանց և արանց յատուկ Ֆանելաներ, գուլպաներ, քաւիկնակներ, ձեռնոցներ, փողկապներ, բրդեղեմներ, Ֆիլսիֆու և խիստ ճաշակաւոր ներգնացապիկներ, գլխու շարքեր, քաւ ֆոսէներ ևլն. ևլն.

Ջերմապէս կը յանձնարենք անգամ մը այցելել այդ վաճառատունը, ուրկէ անպատճառ գոհ մնացողներ միշտ հոն գիմելով պիտի հաստատեն թէ՛ գինը ու աժանութեան, ճեսակի ազնուութեան և ապրանց տկուրութեան երեք առաւելութիւնները ուրիշ ո՛ր և է տեղ կարելի չէ գտնել:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՅՔ

Արդի Հայերէնի լաւագոյն առաջնորդները

1. — Տարրական Քերականութիւն արդի Հայերէնի, նոր ոճով 2 դրուշ.
2. — Լրացուցիչ (Տարրական կարգերու տախտական գիրք) 3 դրուշ.
3. — Նոր Քերականութիւն (գործնական եւ տեսական) 4 դրուշ.

Ամէն ուսուցիչ այս գիրքերով կրնայ դաս տալ. — ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆԸ ԱՆՎՐԷՊ Է:

Դիմել՝ 47 Պապը-Ալի նասսէսի, որ կեդրոնատեղին է Դաւթեան հրատարակութիւններուն: